տակն Զենոնի՝ հերքեն զԲաղկեդոնի ժողովն, իբրու այն՝ զի ընկալեալ իցէ զգիրս Թէոդոսի Մոմսուեստացւոյ, կամ զաղանդն իսկ Յուլիանեայ, զորմէ տես ի հատորն ժողովոց Գլ. 11:

Զաղանդն Յուլիանեայ Եղիկառնացւոյ սկսաւ արծարծել և Սևերիանոս եպիսկոպոս Եփեսոսի ի սկզբան թուականութեան Հայոց յամի Տեառն 552. որ անչարչարելի ասէր զմարմինն Քրիստոսի և առ աչօք համարէր լինել զամենայն մարդկային կիրս և զչարչարանս Փրկչին, և զայս մոլորութիւն սփռեաց ի ձեռն եպիսկոպոսաց մինչև ի սահմանս Հայաստանեայց. (Յովհ. Եսորի, եպիսկոպոս Եսիոյ՝ ժամանակակից նորին):

Եւ յԼ Մովսէս Կաթողիկոսն իմացեալ իսկ և իսկ ետ արտաքսել զաղանդաւորսն ի հովանոց վեհականին իւրոյ և զոք ոչ եթող յարել ի նորին վարդապետութիւն. զոր յետոյ դատապարտեաց ժողովով Յովհ. Իմաստասէր:

ՅՕԴ. ԺԴ.

Նեստորական Հայք ոմանք՝ որք և զգիրս ինչ Թարգմանեն յԱսորւոց ի Հայ:

(Ամի Տեառն 530): Յաւուրս Կիւրիոնի Կաթողիկոսին Վրաց, որ կալաւ զաթոռ նոցա ի վաներեցութենէ Մայր Եկեղեցւոյ կաթողիկոսարանին Հայոց և ի քորեպիսկոպոսութենէ Արարատայ, էին ի կողմանս նորին բազում Նեստորականք ի Խուժիկ ազգէ, որք զարհամարհանս կրելով ի նոցունց վասն բանի հաւատոյ՝ դարձան կեղծաւորութեամբ ի մոլորութենէ իւրեանց. բայց որոց և Կիւրիոնն չե-գիտելով զստութիւն դարձի նոցին, ընդունի զնոսա ի հաղորդութիւն եկեղեցւոյ: Եւ յԼ Մովսէս Կաթողիկոս լուեալ զայն՝ գրէ մեղադրութիւն առ Կիւրիոն իբր այն թէ՝ զնեստորականսն հաղորդեաց ի հաւատս ուղղափառ եկեղեցւոյ. և նորա վերստին ստուգեալ զստութեամբ դարձն նոցա, նզովեաց հերքեաց զնոսա յեկեղեցւոյ յիւրմէ: (Թուղթ Կիւրիոնի և Աբրահամ Կաթողիկոսի):

(Շարունակելի)

ԱԲԵԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.

---

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆՑԵԱԼՆ.

(Շարունակութիւն)

Յկէն երեքտասաներորդ դարու՝ պատմականութիւնն բաւական միջոցներ չըտար ի Կիլիկիոյ յաձախելոյ և Հայոց հոգևոր և մարմնաւոր Գեօթից հետ յարաբերութիւնները հաստատելոյ համար:

Հայոց Կաթողիկոսունք և Թագաւորք՝ քաղաքական երկիւղներ կրելով՝ մանաւանդ՝ ըստ ներելոյ հանգամանաց ժամանակին՝ պապերու հզօր ազդեցութենէ ակնածելով՝ կջանային ըստ արտաքնոյն սիրալիր յարաբերութիւն ունենալ պապերու՝ և նոքին կրօնական հըպատակութեան ներքև գտնուած քաղաքական իշխանաւորաց հետ, որպէս զի ապահով մնան Յունական մեքենայութիւններէն և Յունական թելադրութեամբք գրգռուած ապստամբութիւն և յարձակումներէ:

Սակայն պատմականութիւնն հաստահե-աէ յաջողեցաւ պատրել մեր Կաթողի-

կոսունքը և Թագաւորքը՝ կրօնական ուղղափառութեան նախանձախնդրութեան պատրուակին ներքև ծպտեալ, և այլ ևս չբաւականանալով իւր պաշտօնէից միջոցներով ներգործելէ՝ գրական ասպարէզը ձեռք առաւ և Բարձրբերդացի Կոստանդին Կաթողիկոսի իշխանութեան միջոցներում մի գիր գրեց ինչ ինչ փոփոխութիւնք և նոր առաջարկութիւնք ծրագրելով :

Ամենուստեք վտանգը շրջապատած լինելով՝ թէպէտ պապականութեան բուն նպատակը քաջ գիտէին և երբեմն փորձ փորձած էին վճռական ընթացք բռնել և արտաքսել զպապականութիւնն ի Կիլիկիայէ, բայց և այնպէս ի տկարութենէ ստիպեալ՝ Կոստանդին Հայրապետ և Հեթում Արքայ գուն գործեցին մի թեթև զիջումն անել, և այս նպատակով էր՝ որ մի Ազգային—Եկեղեցական ժողովք հրաւիրեցին ի 1243 Թուականին, յորում իբր ի բարեկարգութիւն Եկեղեցւոյ և Ազգի՝ տասն և հինգ կանոն հաստատեցին. տասներորդ կանոնն էր ամէն տեղ դպրատա-րանց—նեան վերայ մեծ խնամք տանել և առաջնորդներ կարգել. և նոցա վերայ աւելի ևս հսկել. իսկ քսանևհինգերորդ՝ վերջին կանոնին մէջ յաւելուցին ի պապէն առաջարկուածն՝ այս ինքն՝ հիւանդաց վերայ իւղով վերջին օծման խորհուրդ կատարել : Սակայն այս վերջին կանոն միայն գրական դարձաւ և ոչ գործական եղաւ, վասն զի Եկեղեցին և Ազգն երբէք ընդունած չէր և գործել պիտի չընդունէր, զոր քաջ գիտնալով Կոստանդին Հայրապետ՝ վերյիշեալ ժողովքը արձակելէն երեք տարի յետոյ՝ իւր քաղաքակից և ի ժամանակին նշանաւոր եղած Վարդան Վարդապետ Բարձրբերդացւոյ ձեռամբ և յատուկ Կոնդակով՝ իբր ի ցոյց *)՝ ամեն տեղ կամեցաւ գործադրել տալ ժողովոյ սահմանադրութիւնքը, թէպէտ վերջին օծման կանոնը և ոչ մի տեղ գործադրուեցաւ և ոչ գործադրելոյ համար նախանձախնդրութիւն երևեցաւ Հայրապետի կողմանէ՝ ինչպէս որ Վարդան Վարդապետի պատմագրութեան մէջ ևս թեթև և սառըն կերպով արձանագրուած է այս խնդիր։ Իսկ Հոգւոյն սրբոյ ելման վարդապետութեան համար բացառական պատասխանը տալով առ պապականութիւնն՝ այդ խնդիրը ապարդիւն թողին։ — Մանաւանդ այն ժամանակէն յետոյ՝ թշնամեաց յարձակմանց յաճախակի վտանգաւորութիւններէն և աւերմունքներէն Հայաստան բաւական տագնապի մէջ էր, և Հեթում թագաւոր կջանայր Թաթարաց խանից հետ բարեկամութիւն կապել և երկիրը ապահովել ընդ դէմ Եգիպտական ամիրայից և ասպատակութեանց, որոց երեսէն խաչակիր լատինական զօրքն ևս բաւական տագնապ կրկրէին, և Կղեմէս Դ. պապն՝ պապականութեան միւս նպատակը մոռացման տալով իւր խաչակիր բանակին պաշտպանութեան համար յորդորական գրեց առ Հեթում՝ մինչև առ նա ինքն

(*) Նկատելով Կոստանդին Բարձրբերդցի Հայրապետի ի պայծառութիւն և ի բարեկարգութիւն Ազգի և Եկեղեցւոյ Հայաստանեայց արած անկեղծ և եռանդուն ջանքերը և անխոնջ աշխատութիւնքը, վերջին օծման համար բռնած ընթացքը ինքնին կը հասկացուի՝ որ ի ցոյց էին Պապերու վնասակար և վտանգաբեր ազդեցութենէն ապահով մնալոյ հնարաւոր խորհրդով.

պաշտպանութեան կըկարօտէր և Նուբարեան քանիցս խաչակրութիւնը զինուորող պապութեան հետ յարաբերութիւն անելոյն համար ևս դրացի այլազան իշխանաց կամ կածը շարժեց և բաւական վնաս և հարուած կրեց, որ և առիթ տուաւ միանգամայն Հայոց թագաւորութիւնը խափանելոյ, որպէս զի խաչակիրք և արևմտեան պետութիւնք յարևելս օջակից և պաշտպան չունենան և նոցա ոտքը արևելքէն կտրուի։ Այսպիսի խորհրդոց մէջ Յոյնք ևս մեծ դեր խաղացին՝ թէպէտ ի վերջոյ ինքեանք ևս արժանաւոր փոխարինութիւնը ստացան և վայելեցին։ — Գուբն զոր փորեաց և պեղեաց յունական կայսերութիւնն՝ ի նոյն անկաւ և ինքըն ի խորխորատ։

Ինչ և իցէ. լինելիքն եղաւ, միայն թէ անցելոյն դէպքերէն գոնէ փորձ և խրատ քաղել զուն գործեմք։

Այս միջոցներում (1267 Փ. Թ) առ Աստուած փոխեցաւ Կոստանդին Հայրապետ, և ի վերջոյ՝ ի յաջորդութիւն Կաթուղիկոսութեան Հայաստանեայց ընտրեցաւ Յակոբ Ա. Կլայեցի՝ Գիտնական կոչեցեալն։

(Շարունակելի).

ՎԱՀՐԱՄ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆԿՈՒՆԻ.

# ՊԱՏՄԱԿԱՆ

## ԴԱՐՁԵԱԼ
### ԵՐՋԱՆԿԱՅԻՇԱՏԱԿ ՂՈՒԿԱՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՎԵՐԱՅ.

Արարատ բարեհրատէր ամսագրոյ այս 1875 տարւոյս անցեալ Փետրվարի Ամսատետրակի էջ 63, Երջանկայիշատակ Ղուկաս Կաթուղիկոսի վերայ գրուած գեղեցիկ դատաքննութեան մէջ ի Ծանօթ. 1. հանդիպեցայ մի խնդրոյ, որով սրաբիր և նրբամիտ բարեկամն մեր գիտնական Եզոյ Գալուստ Շերմազանեան՝ հատուածի հեղինակին կհարցանէ, թէ "Ուստի՞ է արդեօք առած ծերունի Գաբրիել Պատկանեանն, որ Արշալոյս Արարատեան անդրանիկ օրագրի 999 համարի իւր յօդուածումն կասէ, թէ Սրբազան Ներսէս Աշտարակեցին է առած վարդապետական աստիճանն, այն ինչ Եփրեմ Վեհափառ Կաթուղիկոսի՝ ցուցակ պաշտօնավարութեան Ներսիսի Սրբազան Արհեւոյ կոչեցեալ Կոնդակի մէջ՝ որ առ նախարարն Զ. Գործոց կընեազ Գօլիցին գրեալ՝ կյիշուի, թէ նա այն աստիճանն առել է 1794, Փետր. 24, ի Զմիւռնիա ի Դանիէլ Արքեպիսկոպոսէ Առաջնորդէ տեղւոյն,,։

Բան զայս երկու տարի և քանի ամիս առաջ ինձ դէպ եղև ստանալ ի Գ. Կարապետ Յարութիւնեանէ Եղեանց և ընթեռնուլ այն Մուրատեանց Մ. Վարդապետէն յօրինեալ Պատմութիւն Հայաստանեայց սուրբ Եկեղեցւոյ կոչեցեալ գիրքն, և տեսանել նորա մէջ այդ հանգուցեալ Ղուկաս Կաթուղիկոսի վերայ զրպարտութիւնն. բայց որովհետև նորա գրողն մաքուր պարզմտութեամբ էր գրել՝ առանց իրիք խարդախութեան, խնայեցի նորա երիտասարդական հասակին և լռեցի, որովհետև նորա այն աշխատութիւնն ընդհանրապէս ինձ յոյժ հաճելի էր երեւել։ Այն ևս բաւական էր, եթէ Սրբազն Ներսէս Կաթուղիկոսն լսած, և նորա կենսագրութեան մէջ պատմած անց-